ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԹԱՔՍՏՈՑՈՒՄ

Mohamed Mbougar Sarr

LA PLUS SECRÈTE MÉMOIRE DES HOMMES

ROMAN

Մոհամեդ Մբուգար Սառ

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԹԱՔՍՏՈՑՈՒՄ

ՎԵՊ

Թարգմանությունը ֆրանսերենից՝
Սամվել Գասպարյանի

ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 821.133.1-31 Սառ
ԳՄԴ 84(4Ֆր)-44
Ս 210

Ս 210 Սառ Մոհամեդ Մբուգար
Հիշողության թաքստոցում: Վեպ / Մ. Մ. Սառ.- Եր.: Newmag, 2024.- 456 էջ:

Փարիզում 1938-ին լույս է տեսնում «Անմարդկայինի լաբիրինթոս» վեպը, որը փարիզյան գրական կյանքում մեծ իրարանցում է առաջացնում: Ոմանց համոզմամբ՝ նոր Արթուր Ռեմբո էր հայտնվել, մյուսների համար պարզ գրագողություն էր: Հրատարակումից հետո գրքի հեղինակն անհետանում է:

Մեր օրերում գիրքը հայտնվում է սենեգալցի երիտասարդ գրողի ձեռքին: Դիեգան Լատիր Ֆայեն տպավորվում է այս ստեղծագործությամբ ու որոշում է բացահայտել գրքի հեղինակի առեղծվածային անհետացումը: Գնալով առեղծվածային հեղինակի հետքերով՝ Դիեգանը հայտնվում է գաղութատիրական ժամանակաշրջանի դրամատիկ իրադարձությունների, Առաջին համաշխարհային պատերազմի, Հոլոքոստի պատմության մութ անկյուններում:

ՀՏԴ 821.133.1-31 Սառ
ԳՄԴ 84(4Ֆր)-44

Cet ouvrage a été publié avec le soutien du Programme d'Aide à la Publication de l'Institut français.

Գիրքը լույս է տեսել Ֆրանսիական ինստիտուտի «Հրատարակության աջակցության ծրագրի» ֆինանսական օժանդակությամբ:

ISBN 978-9939-967-61-5

© 2021, Éditions Philippe Rey
"This edition is published by arrangement with Éditions Philippe Rey in conjunction with its duly appointed agents Books And More Agency #BAM, Paris, France. All rights reserved."

Մոհամեդ Մբուգար, Սառ «Հիշողության թաքստոցում» © 2024, «Նյու Մեգ» ՍՊԸ
Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել EDITIONS PHILIPPE REY հրատարակչության հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Գիրք առաջին

Մաս առաջին

Սարդամոր սարդոսպայնը 13

Մաս երկրորդ

Ամառային օրագիր 45

Առաջին կենսագրույթ

Երեք ծանոթագրություն Գլխավոր գրքի մասին 121

Գիրք երկրորդ

Մաս առաջին

Ուսեյնու Կումաղի կրակը 129

Երկրորդ կենսագրույթ

Երեք ճիչ երկրաշարժի ժամանակ 193

Մաս երկրորդ

Կանայք, որոնց հարցաքննում են, և կանայք, որոնց հարցաքննել են 205

Երրորդ կենսագրույթ

Ո՞ւր անհետացավ Շառլ Էլենպեյնը 245

Մաս երրորդ

Տանգոյի գիշերներ՝ ծովային մակընթացության ժամին 279

Գիրք երրորդ

Մաս առաջին

Ընկերություն – սեր x $\frac{\textit{գրականություն}}{\textit{քաղաքականություն}}$ *= ?* 331

Չորրորդ կենսագրույթ

Մեռած նամակներ 401

Մաս երկրորդ

Մադագի մենությունը 407

Երախտագիտության խոսք 455

Նվիրում եմ Յամբո Ուոլոգեմին

Ստեղծագործությանը որոշ ժամանակ ուղեկցում է Քննադատությունը, այնուհետև նրա ուղեկիցն է դառնում Ընթերցողը: Այդ ճանապարհորդությունը կարող է երկար կամ կարճ տևել: Հետո ընթերցողները մեկը մյուսի հետևից մահանում են, և Ստեղծագործությունը միայնակ է շարունակում ճանապարհը նույնիսկ այն դեպքում, երբ մի նոր Քննադատություն կամ ուրիշ Ընթերցողներ կամաց-կամաց ընտելանում և հետևում են նրան: Հետո Քննադատությունը մահանում է ևս մեկ անգամ, մահանում են նաև Ընթերցողները, և ոսկորներով լեցուն այդ ճանապարհով Ստեղծագործությունը շարունակում է իր ընթացքը դեպի միայնություն: Միայնությանը մոտենալը, նրա հետքերով գնալն անխուսափելի մահվան հավաստի նախանշան են, բայց և այնպես նոր Քննադատությունը և նորահայտ Ընթերցողներն առանց հոգնելու, աննահանջ մոտենում են մահվանը. ժամանակն ու արագությունը հոշոտում են նրանց: Եվ ահա Ստեղծագործությունը բոլորովին միայնակ քայլում է դեպի Անվերջություն: Ու մի օր էլ Ստեղծագործությունը վախճանվում է, ինչպես վախճանվում է ամեն ինչ, ինչպես վախճանվելու են Արեգակը, Երկիր մոլորակը, Արեգակնային համակարգը, այս Գալակտիկան և մարդու ամենանվիրական հիշողությունը:

Ռոբերտո Բոլանո

«Վայրենի խուզարկուներ»

Գիրք առաջին

Մաս առաջին

Սարդամոր սարդոստայնը

Օգոստոսի 27, 2018

Գրողի և նրա ստեղծագործության մասին կարող ենք իմանալ առնվազն հետևյալը. թե՛ մեկը, թե՛ մյուսը շարժվում են ամենակատարյալ լաբիրինթոսում, որի մասին կարող ենք պատկերացնել միայն, թե՛ մեկը, թե՛ մյուսը քայլում են շատ երկար, շրջանաձև ճանապարհով, որտեղ մեկնակետը նույնանում է վերջնակետի՝ միայնության հետ:

Ես մեկնում եմ Ամստերդամից: Չնայած այնտեղ շատ բան սովորեցի ու հասկացա, դժվարանում եմ ասել՝ հիմա Էլիմանին ավելի լա՞վ եմ ճանաչում, կամ նրա գաղտնիքն ավելի խորհրդավո՞ր չի դարձել: Այստեղ կարող եմ հիշել այն պարադոքսը, որը բնորոշ է իմացության ամեն տեսակի փնտրտուքներին. ամեն անգամ, երբ կյանքի ու այս աշխարհի մասին նոր բացահայտում ենք անում, ավելի հստակ ենք պատկերացնում, թե որքան անընդգրկելի են դեռևս չբացահայտվածի և մեր տգիտության սահմանները: Սակայն այս հավասարումն ի զորու չէ ամբողջությամբ արտահայտել Էլիմանի հանդեպ ունեցած իմ զգացումը: Սա այն դեպքն է, երբ անհրաժեշտ է ավելի հիմնավոր ձևակերպում, ուզում եմ ասել՝ մարդկային հոգին ճանաչելու հնարավորության առումով ավելի հոռետեսական մոտեցում: Նրա հոգին նման է սև խոռոչի. մագնիսի պես ձգում և կլանում է այն ամենը, ինչ մոտենում է իրեն: Որոշ ժամանակ ուսումնասիրելով նրա կյանքը՝ խելքդ գլուխդ ես հավաքում՝ մի տեսակ լրջախոհ ու հեզ, նաև հնադավան և գուցե նույնիսկ հուսալքված, և շշնջում ես ինքդ քեզ. «Մենք անզոր ենք ճանաչել մարդկային հոգին»: Ասենք, այնտեղ ճանաչելու բան էլ չկա:

Էլիմանն անհետացավ Գիշերվա մեջ: Արեգակին հրաժեշտ տալու նրա անհոգ անտարբերությունը հիացնում է ինձ: Նրա ստվերի համբառնելը կախարդում է ինձ: Նրա գոյության իմաստը մի գաղտնիք է, որը սևեռուն մտքի պես հետապնդում է ինձ: Ես չեմ հասկանում, թե նա ինչու լռեց,

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark